ՔԱՐՈԶԽՈՍԱԿԱՆ

Տ. ՇԱՀԵ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՆԱՆՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(15 հունիսի, 2014 թ.)

«Եղիա մարդ էր իբրեւ զմեզ ջարչարելի»
(Յակ. Ե. 17):

Սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ,

Ամառնային ջերմության եւ բերկրանքի այս օրը մեր եկեղեցիներում հիշատակվում է մեծն Եղիա մարգարեն: Եւ այդ առթիվ այսօր Ս. Պատարագի բոլոր ընթերցվածքները նվիրված էին նրա կյանքի ու գործի մեջ արտացոլված պատգամին: «Եղիան մարդ էր՝ մեզ պես ջարչարելի»,-պատգամում է Հակոբոս առաքյալն իր նամակում՝ դրանով կարծես արտահայտելով Եկեղեցու այն գիտակցումը, թե Եղիա մարգարեն յուրօրինակ, կենդանի մի պատգամ է, խրատ՝ հավատացյալներիս համար: Այո՛, Եղիայի կյանքը, ինչպես որ այն ավանդված է Աստվածաշունչ մատյանում, զարմանալի է, բուռն ու արտասովոր, այն նման չէ սովորական մարդկանց կյանքին: Նա պատմության մեջ է խուժում հանկարծակիորեն, առանց նախապատրաստության, գործում է առանց կրոնական-քաղաքական սահմանների զանազանման, եւ նույնքան զարմանալիորեն էլ հեռանում է կյանքից՝ երկնային կառքով համբարձվելով երկինք: Նրա կյանքն ասես հետաքրքրաշարժ մի գիրք է, որի ամեն մի էջին մեզ համար պատգամ ու խրատ կա արձանագրված: Այսօր ահա կփորձեմ այդ էջերից մեկը զատել ու պարզել ձեզ, սիրելիներ՛ս, իբրեւ այս տոնի Ս. Պատարագի խորհրդածության ու պատգամի նյութ:

Այդ նրա աննահանջ ու նախանձախնդիր հավատարմությունն է դեպի իր հայրերի դավանած հավատը, օրենքը, նրանց ավանդած հոգեւոր հայրենիքը: Այս գաղափարի համար է մարգարեն հալածվում, հուսահատվում եւ անգամ մի պահ տատամսում. «Արդ, շատ է Տէր, առ զոգի իմ յինէն, Տէր, զի ոչ եմ ես լաւ քան

զհարս իմ» (Գ. Թագ. ԺԹ. 4): Եղիայի ժամանակաշրջանում ողջ երկիրը թաղված էր կռապաշտության մեջ. ծաղկում էր անօրինությունը, դատավորները կաշառքով էին վարում իրենց դատը, թագավորներն ու իշխանները՝անօրինությամբ ղեկավարում իրենց հպատակներին, եւ նույնիսկ երկրի գլխավոր ատվածը՝ Բահաղը, հասանելի էր միայն նրանց, ովքեր ոսկով ու արծաթով էին պատում նրա տաճարներն ու արձանները...Եւ ահա գրեթե անտանելիորեն օրհասական ու անելանելի դարձած այս մղձավանջի միջից ծագում է Եղիայի լուսավոր կերպարը. «Մինչեւ ցե՞ր կաղայք յերկուս հեւս»,-կշտամբում է նա ժողովրդին. դարձե՛ք դեպի Տերը, մի՛ մոռացեք ձեր հայրերի հավատն ու նրանց լուսավոր պատմությունը, մի՛ անտեսեք նրանց թողած հոգեւոր հայրենիքը, մի՛ խլացրեք ձեր ականջները դարերի խորքից հնչող նրանց ձայնին: Եւ նույնիսկ միայնակ մնալով՝ նա չի հանձնվում, որովհետեւ Տերը նրան դանում է ուղիղ դեպի հաղթանակ՝ դեպի անօրեն կռապաշտության ու հասարակական այլասերման «վիրահատության»: Եղիան մաքրում է Իսրայելին հոգեւոր քաղցկեղից, թագավորից մինչեւ քահանա, իշխանից մինչեւ ռամիկ, ամենքն ուխտում են հավատարիմ մնալ Տիրոջ Օրենքին, Աստծո հոգեւո՛ր օրենքին, որ այլ բան չէ, քան արդարություն ու հոգեւոր խաղաղություն մարդկանց սրտերում եւ հոգիներում, անդորր ու երջանկություն նրանց մտքերում եւ աչքերում: Եղիան հեղափոխական չէ, նա քաղաքական գործիչ չէ, նա հասարակական ու ռազմաքաղաքական շարժումների հանդեպ անտարբեր, խեղճ ու աղքատ այրի մի կնոջ մոտ ապաստան գտած, իր մերկությունը մորթե ցնցոտիներով հագիվ ծածկած մեկն է, որի արտաքին տեսքը դժվար թե որեւէ ազդեցություն ունենա մարդկանց ու թագավորների վրա: Նրա ամբողջ մտահոգությունը ժողովրդի հոգեւոր նորոգությունն է, բարոյական ու ատվածային սկզբունքներից բխած արդարության հաստատումը մարդկանց սրտերում: Նա ոչ թե կամենում է գահընկեց անել թագավորներին, այլ փոխել նրանց ներաշխարհը, ոչ թե Աստծո զայրույթով պատժել ժողովրդին, այլ Տիրոջ խոսքի ու հավատի զորությամբ սրբել նրանց:

Վստահ եմ, սիրելի՛ քույրեր ու եղբայրներ, որ Եղիայի կյանքի գրքից պոկված այս փոքրիկ թուղթն անգամ, նրա հախուռն ու բոցկլտացող հավատո օրինակի այս փոքրիկ շեղջն իսկ ձեր սրտերում ու հոգիներում, ձեր մտքերում ու աչքերի մեջ վառում է այն նույն համոզումը, հավատը, թե ամենքիս համար Եղիայի օրինակը հերթական ընթերցվող պատմությունը չէ միայն: Քանզի պատմության թատերաբեմի վրա կարող են փոխվել դերասանները ու հանդիսատեսը, բայց ոչ երբեք բեմն ու նրա բեմադրիչը, որ է ինքն Աստված: Հետեւաբար մենք այս հինկտակարանյան պատումից շատ բան ունենք քաղելու: Նայեցե՛ք ձեր շուրջը. մի՞թե հասարակական-հոգեւոր զարգացումների այս ֆոնի վրա նշմարելի չէ համատարած անօրենության եւ անտարբերության ուրվականը, մի՞թե մարդիկ հաճախ չեն կերտում բահաղներ եւ ոսկով ու արծաթով պատված մարդածին աստվածներ, մի՞թե մեր հասարակությունն այսօր կարիք չունի վերարժեւորելու իր նախ-

նիներից ավանդված հավատի ու հոգեւոր հայրենիքի սկզբունքները: Անշուշտ, մեծապես սրած ու խաբված կլինեն այդ ակներեւ փաստը մերժողները: Բայց ինչպե՞ս հասկանալ Եղիայի կերպարը, ի՞նչ դաս քաղել հինկտակարանյան մարգարեի վարքից:

Եղիան անհուսալի անտարբերության մթնոլորտում մնացել էր մենակ իր ես-ի ու իր Աստծո հետ: Սակայն խորհրդավոր կերպով նրա ես-ը, անհատականությունը խառնվել էր այն մեծ ընդհանրական Ես-ին, որ է նրա արդար ու աստվածապաշտ նախնյաց պատմական ինքնությունը: Այդ հավատի անսպառ աղբյուրից էր զորանում նրա անհատականությունը, այդ հավատարմությունից էր առնում Եղիան հավատի զորավոր ցոլքը, որով բոցավառում էր Իսրայելի զավակների քարացած սրտերը: Մեզանից յուրաքանչյուր ոք կարող է մի-մի եղիա դառնալ, կարող է քրիստոնեական ոգու եւ Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ իր հավատով վերափոխել իր շրջապատը: Բավ է միայն, որ մեր անհատական ես-ը մի պահ գիտակցի ու ինքն իրեն հարց տա. «Ո՞վ եմ ես, հարուստ հոր սնանկ որդի՞, թե՞ հարուստ ժառանգության շենացնող ու հավատարիմ ժառանգ»: Հոգեզալստյան տոնից հետո Եղիայի հիշատակը մեզ ամենքիս՝ իբրեւ Քրիստոսի եկեղեցի, տալիս է հավատարմության ու աննահանջ նախանձախնդրության պատգամ: Հավատարմություն դեպի այն մեծ առաքելությունը, որ կոչվում է քրիստոնեական փրկություն, դեպի այն աննկարագրելի երանությունը, որ երկրի վրա հաստատվեց իբրեւ Աստծո արքայություն: Ամենքս այս տեսլականով պիտի մեր հասարակությունն ու մեր անհատականությունները մաքրենք հոգեւոր քաղցկեղից, ճարակող ու ամեն հոգեւոր արժեք լափող անտարբերությունից: Սրա՛ համար է մեր Տերը մեզ տալիս «իմ բարեկամներ» անունը, սրա՛ համար է մեզ կանչում Տեր Հիսուս Քրիստոս:

Այս ճանապարհն է ահա մեր առաջ բացում այսօրվա հիշատակությունը, ա՛յս ուղին է մեր աչքերի առաջ գծագրում Եղիայի կերպարը: Եւ դեռ ավելին: Ա՛յս համոզումն է մեզ փոխանցում Տերը՝ իրեն համեմատելով Եղիայի հետ: Ունենք ուրեմն այսօր՝ Ս. Պատարագի խորհրդավոր այս պահին, Եղիայի պատգամը, որ մեզ պես մարդ էր չարչարելի, բայց մեզ ուսուցանում է չարչարանքի ու պայքարի միջով սլացող արքայության ճանապարհը:

Թող Տիրոջ սերն ու հավատի զորությունը մեզ ուղեկցեն այժմ եւ միշտ, եւ հավիտյանս հավիտենից. ամեն: